Երևան քաղաքում ստորգետնյա ավտոկայանատեղի կառուցման ներդրումային նախագիծ



Ծրագրի նկարագիրը

Երևան քաղաքում ստորգետնյա ավտոկայանատեղի նախագծման և կառուցման ծրագրի հիմնական նպատակն է հնարավորինս լուծել Երևան քաղաքում օրեցօր ավելացող ավտոմեքենաների կայանման խնդիրը: Ծրագրի իրականացման արդյունքում հնարավորություն կստեղծվի կայանատեղեր ապահովել բազմաբնակարան բնակելի շենքերի բնակիչների, ինչպես նաև վարչական շենքերի, բանկերի, առևտրի և սպասարկման օբյեկտների աշխատողների և այցելուների մեքենաների համար:

Առաջարկվում է կայանատեղին կառուցել բնակելի թաղամասերի բակային հատվածներում՝ բակերում առկա անկանոն կառուցապատված ավտոտնակների իրացման և համապատասխան փոխհատուցման ճանապարհով, ինչպես նաև բնակելի թաղամասերի բակային հատվածներում գոյություն ունեցող խաղահրապարակների տակ՝ ստորգետնյա եղանակով:

Տեխնիկական ցուցանիշներ	Հարկայնությունը՝ 1-3 հարկ: Շինարարական մակերեսը՝ ըստ տարածքի հնարավորության:
Ծրագրի ժամկետները	Շուրջ 2 տարի:
Ծրագրի արժեքը	Շինարարական աշխատանքների արժեքը 1 քմ-ի համար կկազմի շուրջ 650 ԱՄՆ դոլար՝ առանց իրացման և փախհատուցման աշխատանքների:
Ներդրումների ձևը և հիմնական պայմանները	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել համայնք-մասնավոր հատված համագործակցության շրջանակում: Քաղաքապետարանի կողմից կտրամադրվի ծրագրի իրականացման համապատասխան տարածքների վերաբերյալ առաջարկներ:
Ներկա իրավիճակ	Առկա է էսքիզային նախագիծ՝ մշակված «Երևան նախագիծ» ընկերության կողմից: